ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Վ.Վ.Հարությունյան

/Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 1

«28» օգոստոսի 2023 թ.

ԷԻԿ/բ 122, ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ-1 ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ **042101.00.6, Իրավագիտություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **042101.01.6, Իրավագիտություն**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ **իրավագիտության բակալավր**
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ **էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման**
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ **առկա, հեռակա**
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ առկա **2-րդ/ 1-ին**
հեռակա **2-րդ/ 1-ին**

Դասախոս՝ **Սոնա Բուդաղյան**
/անուն, ազգանուն/

էլ. փոստ-sonbud@mail.ru
Հասցե՝ Ք.Վանաձոր Երևանյան 149/23

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում 3 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները . . . . . .
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների . . . .
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը . . . .
7. Ուսումնական աշխատանքները տեսակները . . . . . .
8. Դասավանդման մեթոդներ . . . . . .
9. Ուսումնառության մեթոդները . . . . . .
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը . . . .
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ . . . . . .
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ . . . . . .
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ . . . . . .
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ . . . .
    12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ . . . . . .
    12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ . . . . . .
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում . . . . . .
14. Գնահատում . . . . . .
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում . . . . . .
    14.2. Հարցաշար . . . . . .
    14.3. Գնահատման չափանիշներ . . . . . .
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ . . . . . .

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

«Քրեական իրավունք» դասընթացը կարևորվում է իրավագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է **042101.01.6** կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է.

- քրեաիրավական հարաբերությունների զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- համապատասխան չափանիշների հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:
- իրավունքի տարբեր ճյուղերի և դրանցով կարգավորվող հարաբերությունների համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:
- իրավունքի այս ճյուղով կարգավորվող հարաբերությունները վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:

2.2. Դասընթացի խնդիրներն են.

- Սովորեցնել քրեական իրավունքի տեսական հիմքերը:
- Բացատրել քրեաիրավական հարաբերությունների օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել հանցանքի հետ կապված քրեաիրավական հարաբերությունների առանձնահատկությունները իրավական ողջ համակարգի համատեքստում:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/.

«Քրեական իրավունք» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը **042101.01.6** «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «Պետության և իրավունքի տեսություն», «Սահմանադրական իրավունք», «Մարդու իրավունքի հիմունքներ» դասընթացներից:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2]

«Քրեական իրավունք» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա **քրեական իրավունքի** տեսական հիմունքները,
2. իմանա քրեաիրավական հարաբերությունների ուսումնասիրման մեթոդական հիմքերը
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

4. տիրապետի իրավունքի այս ճյուղին հատուկ հետազոտության մեթոդներին,
5. կարողանա իրավագիտության մասնագիտության շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝
ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,
ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
ԳԿ9 խնդիրների լուծում,
Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝
ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,
ՀԳԿ3 սովորելու ունակություն,
ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,
Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)
ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
ԱԿ11 տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
ԱԿ14 տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«Քրեական իրավունք» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել փաստաբանական մասնագիտական գործունեության ընթացքում, աշխատելու, նաև մագիստրատուրայում, ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և իրավագիտության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**5 կրեդիտ/150 ժամ**	

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ	ժամաքանակ

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

Դասախոսություն	36	
Գործնական աշխատանք		
Սեմինար պարապմունք	34	
Լաբորատոր աշխատանք		
Ինքնուրույն աշխատանք	80	
Ընդամենը	150	
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	Ընթացիկ քննություն	

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:
  Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրա-կացություն
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:
  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործ-ընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսում-նասիրման և լուծման նպատակով:
  - **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
  - **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
  - **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
  - **Հարցի նախապատրաստման մոդել** –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տետր** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** [6] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր.

9. **Ուսումնառության մեթոդներն են** [7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում.

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

Հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Քրեական իրավունքի հասկացությունը, համակարգը և խնդիրները:	2	2			
2.	Քրեական իրավունքի սկզբունքները:	2	2			
3.	Քրեական օրենք	2	2			
4.	Հանցանք հասկացությունը, դասակարգումը	2	2			
5.	Հանցակազմի հասկացությունը, նշանակությունը, տարրերը	2	2			
6.	Հանցագործության օբյեկտի հասկացությունը և տեսակները:Հանցագործության առարկան	4	4			
7	Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունն ու նշանակությունը	4	2			
8.	Հանցագործության սուբյեկտը	4	4			
9.	Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը: Մեղք	4	4			
10.	Քրեական պատասխանատվության հիմքը	4	4			
11.	Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները	4	4			
12.	Հանցակցության հասկացությունը և հատկանիշները	2	2			
ԸՆԴԱՄԵՆԸ		36	34			

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

[8] Նման է օրացուցային պլանին

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	ՀՀ Քրեական օրենսգիրք	2022
2.	«ՀՀ Քրեական իրավունք», Ընդհանուր մաս խմբ կոլ.	ԵՊՀ 2014
3.	Միքայել Գրիգորյան «ՀՀ Քրեական իրավունք»	2008
4.	Գ. Ղազինյան «ՀՀ Քրեական իրավունք»	ԵՊՀ 2010
5.	Գ.Թ Գրիգորյան «ՀՀ Քրեական իրավունք» Ընդհանուր մաս	2022
6.	Գաբուզյան,Մարգարյան, Սիմոնյան «ՀՀ քրեական նոր օրենսգրքի ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց»	2022
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Մ.Գրիգորյան«Հանցագործության ուսմունքը քրեական իրավունքում»	2001
2.	Կ.Լալայան «ՀՀ քրեական իրավունք» բուհական դասագիրք	2005
3.	Уголовное право, обшая часть.	2018
4.	Н. Ветров, Уголовное право, Обшая часть.	2015
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.	Arlis.am	
2.	Parlament.am	
3.	Gov.am	

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն[9]
1.	Քրեական իրավունքի հասկացությունը, համակարգը և խնդիրները:	Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը, համակարգը: Քրեական իրավունքի խնդիրները: Քրեաիրավական հարաբերություններ: Քրեաիրավական հարաբերությունների տարատեսակները՝ պահպանիչ, քրեաիրավական արգելք, կարգավորիչ:	2	ՊԳ 1,3,4,5,6

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

		Քրեական իրավունքի առարկան Քրեական իրավունքի հարաբերակցությունը իրավունքի հարակից և այլ ճյուղերի հետ: Քրեական իրավունքի համակարգի ընդհանուր և հատուկ մասերի փոխկապակցվածությունն ու միասնությունը: Քրեական իրավունքի և օրենսդրության խնդիրները: Քրեական իրավունքի գիտությունը, նրա դերն ու նշանակությունը արդի արմատական բարեփոխումների իրականացման գործում:		
2.	Քրեական իրավունքի սկզբունքները:	Քրեական իրավունքի սկզբունքների հասկացությունը, օրենսդրական ձևակերպումները, համակարգը: Օրինականության սկզբունքի էությունը: Օրենքի առջև հավասարության ընդհանուր սկզբունքի հասկացությունը և բացակայության պատճառները նոր օրենսգրքից: Պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի հասկացությունը և կարևորությունը քրեաիրավական հարաբերությունների կարգավորման գործում:Անփնական պատասխանատվության սկզբունքը, դրա բնորոշումն ու նշանակությունը : Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Արդարության և քրեական պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Մարդասիրության ընդհանուր սկզբունքի էությունը և կիրառությունը օրենսգրքի մեջ: Բոլոր սկզբունքները որպես փոխկապակցված համակարգ:	2	ՊԳ 1,3,5,6
3.	Քրեական օրենք	Քրեական օրենքի հասկացությունը, հատկանիշները: Այն որպես բարձրագույն իրավաբանական ուժով օժտված նորմատիվ-իրավական ակտ: Նրա նշանակությունը: Քրեական իրավունքի աղբյուրները: ՀՀ քրեական նոր օրենքի կառուցվածքը: Ընդհանուր մասի հիմնական ինստիտուտները: Հատուկ մասի համակարգը: Քրեաիրավական նորմը, նրա կառուցվածքը: Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները: Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում: Քրեական օրենքի հետադարձ ուժը: Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ: Հանցանք կատարած անձանց հանձնելու հետ կապված օրենսդրական նոր մոտեցումները (էքստրադիցիա):	2	ՊԳ 1,3,5,6

4.	Հանցանք հասկացությունը, դասակարգումը	Հանցանք հասկացությունը: Հանցանքների դասակարգումը: Պատժի տեսակը և չափը որպես հանցանքի բնույթի և վտանգավորության աստիճանի դասակարգման հիմք: Հանցանքների դասակագրման իրավական հետևանքները և նշանակությունը:	2	ՊԳ 1,2,5,6, ԼԳ1,3
5.	Հանցակազմի հասկացությունը, նշանակությունը, տարրերը	Հանցակազմի հասկացությունը: Հանցակազմը որպես հանցագործությունների որակման միակ չափանիշ: Հանցակազմի հատկանիշները և նշանակությունը: Հանցակազմի տարրերը և հատկանիշները: Հանցակազմի հատուկ կամ պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: Հանցակազմի տեսակներընկամ դասակարգումը:Հիմնական Հանցակազմ, ծանրացնող հանգամանքներոց Հանցակազմ (áñ³ÏÛ³É Ñ³Ýó³Ï³½Ù), մեղմացնող հանգամանքներով Հանցակազմ (³ñïáÝÛ³É Ñ³Ýó³Ï³½Ù):	2	ՊԳ 1,2,3,5,
6.	Հանցագործության օբյեկտի հասկացությունը և տեսակները:Հանցագործության առարկան	Հանցագործության օբյեկտի հասկացությունը: Հանրային վտանգավորություն, նրա աստիճանները: Հանցագործության առարկան:	4	ՊԳ 1,2,5,
7.	Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունն ու նշանակությունը	Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը և քրեաիրավական նշանակությունը: Հանրորեն վտանգավոր արարք՝ գործողություն կամ անգործություն : Այն որպես հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ: Հանցագործությունների օբյեկտիվ կողմի լրացուցիչ կամ ֆակուլտատիվ հատկանիշները: Հանրորեն վտանգավոր հետևանք հասկացությունը: Պատճառահետևանքային կապը հանրորեն վտանգավոր արարքի և հետևանքների միջև:	4	ՊԳ 1,3,5,
8.	Հանցագործության սուբյեկտը	Հանցագործության սուբյեկտի հասկացությունը: Սուբյեկտի պարտադիր հատկանիշները: Համապատասխան հանցագործության սուբյեկտը բնութագրող լրացուցիչ կամ ֆակուլտատիվ հատկանիշները՝ սեռ, տարիք, պաշտոնատար անձ, մասնագիտություն և այլն: Տարիքը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ: Մեղսունակություն և անմեղսունակություն: Հանցագործության հատուկ սուբյեկտ:	4	ՊԳ 1,2,5,

9.	Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը: Մեղք	Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը: Մեղքի հասկացությունը: Մեղքի ձևերը: Մեղքը որպես հանցագործության պարտադիր հատկանիշ: Դիտավորությունը որպես մեղքի ձև:Դիտավորության տեսակները՝ ուղղակի և անուղղակի դիտավորություն: Անզգուշությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները՝ ինքնավստահություն և անփութություն: Մեղքի երկու փևով կատարվող հանցագործությունների ընդհանուր բնութագիրը, տեսակները, հարաբերակցությունը բարդ հանցագործություններ հետ:	4	ՊԳ 1,3,5,
10.	Քրեական պատասխանատվության հիմքը	Քրեական պատասխանատվության հասկացությունը: Քրեական օրենքով նախատեսված, հանրության համար վտանգավոր արարքը՝ հանցանքը, որպես քրեական պատասխանատվության միակ հիմք:	4	ՊԳ 1,2,5,
11.	Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները	Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները: Հանցագործության նախապատրաստություն: Հանցափորձ:	4	ՊԳ 1,5,5,
12.	Հանցակցության հասկացությունը և հատկանիշները	Հանցակցության հասկացությունը և հատկանիշները: Հանցակիցների տեսակները: Հանցակիցների անհատական պատասխանատվությունը:	2	ՊԳ 1,3,5,

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

Հ/Հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամ*	Ստուգման ձևը	Գրականություն[10]
1.	Քրեական իրավունքի հասկացությունը,	Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան,	2		ՊԳ 1,2,5,6, ԼԳ,2,3

[10] Ը12.ստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

	համակարգը և խնդիրները:	մեթոդը, համակարգը: Քրեական իրավունքի խնդիրները: Քրեաիրավական հարաբերություններ: Քրեաիրավական հարաբերությունների տարատեսակները՝ պահպանիչ, քրեաիրավական արգելք, կարգավորիչ: Քրեական իրավունքի առարկան Քրեական իրավունքի հարաբերակցությունը իրավունքի հարակից և այլ ճյուղերի հետ: Քրեական իրավունքի համակարգի ընդհանուր և հատուկ մասերի փոխկապակցվածությունն ու միասնությունը: Քրեական իրավունքի և օրենսդրության խնդիրները: Քրեական իրավունքի գիտությունը, նրա դերն ու նշանակությունը արդի արմատական բարեփոխումների իրականացման գործում:			
2.	Քրեական իրավունքի սկզբունքները:	Քրեական իրավունքի սկզբունքների հասկացությունը, օրենսդրական ձևակերպումները, համակարգը: Օրինականության սկզբունքի էությունը: Օրենքի առջև հավասարության ընդհանուր սկզբունքի հասկացությունը և բացակայության պատճառները նոր օրենսգրքից: Պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի հասկացությունը և կարևորությունը քրեաիրավական հարաբերությունների կարգավորման գործում:Անփնական պատասխանատվության սկզբունքը, դրա բնորոշումն ու նշանակությունը : Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Արդարության և քրեական պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Մարդասիրության ընդհանուր սկզբունքի էությունը և կիրառությունը օրենսգրքի մեջ: Բոլոր սկզբունքները որպես փոխկապակցված համակարգ:	2		ՊԳ 1,2,5,6, ԼԳ,2,3

3.	Քրեական օրենք	Քրեական օրենքի հասկացությունը, հատկանիշները: Այն որպես բարձրագույն իրավաբանական ուժով օժտված նորմատիվ-իրավական ակտ: Նրա նշանակությունը: Քրեական իրավունքի աղբյուրները: ՀՀ քրեական նոր օրենքի կառուցվածքը: Ընդհանուր մասի հիմնական ինստիտուտները: Հատուկ մասի համակարգը: Քրեաիրավական նորմը, նրա կառուցվածքը: Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները: Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում: Քրեական օրենքի հետադարձ ուժը: Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ: Հանցանք կատարած անձանց հանձնելու հետ կապված օրենսդրական նոր մոտեցումները (էքստրադիցիա):	6		ՊԳ 1,2,5,6, ԼԳ1,2,3
4.	Հանցանք հասկացությունը, դասակարգումը	Հանցանք հասկացությունը: Հանցանքների դասակարգումը: Պատժի տեսակը և չափը որպես հանցանքի բնույթի և վտանգավորության աստիճանի դասակարգման հիմք: Հանցանքների դասակագրման իրավական հետևանքները և նշանակությունը:	2		ՊԳ 1,2,5,6, ԼԳ1,2,3
5.	Հանցակազմի հասկացությունը, նշանակությունը, տարրերը	Հանցակազմի հասկացությունը: Հանցակազմը որպես հանցագործությունների որակման միակ չափանիշ: Հանցակազմի հատկանիշները և նշանակությունը: Հանցակազմի տարրերը և հատկանիշները: Հանցակազմի հատուկ կամ պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: Հանցակազմի տեսակներընկամ դասակարգումը:Հիմնական Հանցակազմ, ծանրացնող հանգամանքներոց Հանցակազմ (որակյալ հանցակազմ), մեղմացնող հանգամանքներով Հանցակազմ (արտոնյալ հանցակազմ):	2		ՊԳ 1,2,5,6, ԼԳ1,2,3

6.	Հանցագործության օբյեկտի հասկացությունը և տեսակները:Հանցագործության առարկան	Հանցագործության օբյեկտի հասկացությունը: Հանրային վտանգավորություն, նրա աստիճանները: Հանցագործության առարկան:	4		ՊԳ 1,2,5,6, ԼԳ1,2,3
7.	Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունն ու նշանակությունը	Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը և քրեաիրավական նշանակությունը: Հանրորեն վտանգավոր արարք՝ գործողություն կամ անգործություն : Այն որպես հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ: Հանցագործությունների օբյեկտիվ կողմի լրացուցիչ կամ ֆակուլտատիվ հատկանիշները: Հանրորեն վտանգավոր հետևանք հասկացությունը: Պատճառահետևանքային կապը հանրորեն վտանգավոր արարքի և հետևանքների միջև:	2		ՊԳ 1,2,5,6, ԼԳ1,2,3
8.	Հանցագործության սուբյեկտը	Հանցագործության սուբյեկտի հասկացությունը: Սուբյեկտի պարտադիր հատկանիշները: Համապատասխան հանցագործության սուբյեկտը բնութագրող լրացուցիչ կամ ֆակուլտատիվ հատկանիշները՝ սեռ, տարիք, պաշտոնատար անձ, մասնագիտություն և այլն: Տարիքը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ: Մեղսունակություն և անմեղսունակություն: Հանցագործության հատուկ սուբյեկտ:	4		ՊԳ 1,2,5,6 ԼԳ,2,3
9.	Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը: Մեղք	Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը: Մեղքի հասկացությունը: Մեղքի ձևերը: Մեղքը որպես հանցագործության պարտադիր հատկանիշ: Դիտավորությունը որպես մեղքի ձև:Դիտավորության տեսակները՝ ուղղակի և անուղղակի դիտավորություն:	4		ՊԳ 1,2,5, ԼԳ 2,3

		Անզգուշությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները՝ ինքնավստահություն և անփութություն: Մեղքի երկու փևով կատարվող հանցագործությունների ընդհանուր բնութագիրը, տեսակները, հարաբերակցությունը բարդ հանցագործություններ հետ:			
10.	Քրեական պատասխանատվության հիմքը	Քրեական պատասխանատվության հասկացությունը: Քրեական օրենքով նախատեսված, հանրության համար վտանգավոր արարքը՝ հանցանքը, որպես քրեական պատասխանատվության միակ հիմք:	4		ՊԳ 1,2,5, ԼԳ1,,2,3
11.	Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները	Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները: Հանցագործության նախապատրաստություն: Հանցափորձ:	4		ՊԳ 1,2,5 ԼԳ,2,3
12.	Հանցակցության հասկացությունը և հատկանիշները	Հանցակցության հասկացությունը և հատկանիշները: Հանցակիցների տեսակները: Հանցակիցների անհատական պատասխանատվությունը:	2		ՊԳ 1,2,5, ԼԳ 2,3

12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը[11]	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն[12]
1.	Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ:	Քրեական օրենքի տարածության մեջ գործողության ռեալ ունիվերսալ սկզբունքներ	Բանավոր քննարկում	2 շաբաթ	10 միավոր	ՊԳ 1,2,3,5,6, ԼԳ 1,2,4

[11] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[12] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

2.	Քրեական օրենքի հետադարձ ուժը	Հետադարձ ուժի հետ կապված առանձնահատկությունները	խմբային աշխատանք	1 շաբաթ	10 միավոր	ՊԳ 1,2,3,5,6, ԼԳ 1,2,4
3.	Հանցանք հասկացությունը և դասակարգումը	Օրենսդրական և տեսական նյութի ուսումնասիրություն	ռեֆերատ	2 շաբաթ	10 միավոր	ՊԳ 1,2,3,5,6, ԼԳ 1,2,4
4.	Ներկայացնել հանցագործություն իր բոլոր հատկանիշներով	Լրահոսից կամ օպերատիվ հաղորդումներից քաղել հանցագործության մասին տեղեկություն և վերլուծել այն	ռեֆերատ	Մինչև կիսամյակի վերջ	10 միավոր	ՊԳ 1,2,5 Ինտերնետային կայքեր
5.	Կազմել օրինակներ, որտեղ քրեական պատասխանատվության հիմքը բացակայում է	Լրահոսից կամ օպերատիվ հաղորդումներից քաղել հանցագործության մասին տեղեկություն և վերլուծել այն	Խմբային աշխատանք	2 շաբաթ	10 միավոր	ՊԳ 1,2,3,5,6, ԼԳ 1,2,4
6.	Կազմել հանցակցությամբ կատարված հանցագործության մեկական օրինակ	Լրահոսից կամ օպերատիվ հաղորդումներից քաղել նշված հանցագործության մասին տեղեկություն և վերլուծել այն	ռեֆերատ	Մինչև կիսամյակի վերջ	10 միավոր	ՊԳ 1,2,5 Ինտերնետային կայքեր

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[13]

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Լսարան,
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	Պրոյեկտոր
Համակարգչային ծրագրեր	
Այլ	

[13] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[14]:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- Գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքների ընթացքում ուսանողի ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը 40 միավոր:
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (առկա ուսուցման համակարգում՝ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ առավելագույնը գումարային 40 միավոր, հեռակա ուսուցմա համակարգում՝քննություն և ստուգարք՝ առավելագույնը՝40 միավոր):
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:[15]

---

[14] «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

[15] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1 Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, խնդիրները:

2.Քրեական իրավունքի սկզբունքները:

3.Քրեական օրենքի հասկացությունը հատկանիշները: Քրեական իրավունքի աղբյուրները:

4.Քրեական օրենքիկառուցվածքը: Քրեաիրավական նորմը և դրա կառուցվածքը:

5.Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում:

6.Քրեական օրենքի հետադարձ ուժը:

7.Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ:

8.Քրեական օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները:

9.Հանցանքի հասկացությունը և հատկանիշները:

10.Հանցանքի տեսակները (դասակարգումը):

11.Հանցակազմի հասկացությունը: Ընդհանուր և կոնկրետ հանցակազմ:

12.Հանցակազմի նշանակությունը և տեսակները:

13.Հանցակազմի տարերը և հատկանիշները:

14, Հանցագործության օբյեկտի հասկացությունը: Հանցագործության օբյեկտը և առարկան:

15,Հանցագործության օբյեկտի տեսակները:

16 Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը, նշանակությունը:

17, Հանրորեն վտանգավոր արարք:

18. Հանրորեն վտանգավոր հետևանքներ:

19. Հանցագործության սուբյեկտի հասկացությունը, հատկանիշները:

20.Տարիքը՝ որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ:

21.Մեղսունակությունն անմեղսունակություն:

22. Հանցագործության հատուկ սուբյեկտ:

23.Քրեական պատասխանատվության հասկացությունը և հիմքը:

24.Հանցագործությունների բազմակիության հասկացությունը:

25. Հանցագործությունների համակցությունը և կրկնակիությունը:

26. Հանցագործության փուլերի հասկացությունը:

27. Հանցագործության նախապատրաստություն, օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշները:

28. Հանցափորձ հասկացությունը, օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշները:

29.Հանցակցության հասկացությունը և տեսակները:

30. Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները:

<u>Ա) 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)</u>
Ընդգրկված թեմաները.

1. Քրեական իրավունքի հասկացությունը, համակարգը և խնդիրները:
2. Քրեական իրավունքի սկզբունքները:
3. Քրեական օրենք
4. Հանցանք հասկացությունը, դասակարգումը
5. Հանցակազմի հասկացությունը, նշանակությունը, տարրերը

- **Ընդգրկված հարցեր.**

Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, խնդիրները:

2.Քրեական իրավունքի սկզբունքները:

3.Քրեական օրենքի հասկացությունը հատկանիշները: Քրեական իրավունքի աղբյուրները:

4.Քրեական օրենքիկառուցվածքը: Քրեաիրավական նորմը և դրա կառուցվածքը:

5.Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում:

6.Քրեական օրենքի հետադարձ ուժը:

7.Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ:

8.Քրեական օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները:

9.Հանցանքի հասկացությունը և հատկանիշները:

10.Հանցանքի տեսակները (դասակարգումը):

11.Հանցակազմի հասկացությունը: Ընդհանուր և կոնկրետ հանցակազմ:

12.Հանցակազմի նշանակությունը և տեսակները:

13.Հանցակազմի տարերը և հատկանիշները:

Բ) 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկվող թեմաները.**

1. Հանցագործության օբյեկտի հասկացությունը և տեսակները:Հանցագործության առարկան:
2. Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունն ու նշանակությունը:
3. Հանցագործության սուբյեկտը:
4. Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը: Մեղք:
5. Քրեական պատասխանատվության հիմքը:
6. Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները:
7. Հանցակցության հասկացությունը և հատկանիշները:

- **Ընդգրկված հարցեր.**

1. Հանցագործության օբյեկտի հասկացությունը: Հանցագործության օբյեկտը և առարկան:
2. Հանցագործության օբյեկտի տեսակները:
3. Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը, նշանակությունը:
4. Հանրորեն վտանգավոր արարք:
5. Հանրորեն վտանգավոր հետևանքներ:
6. Հանցագործության սուբյեկտի հասկացությունը, հատկանիշները:
7. Տարիքը՝ որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ:
8. Մեղսունակությունև անմեղսունակություն:
9. Հանցագործության հատուկ սուբյեկտ:
10. Քրեական պատասխանատվության հասկացությունը և հիմքը:
11. Հանցագործությունների բազմակիության հասկացությունը:
12. Հանցագործությունների համակցությունը և կրկնակիությունը:
13. Հանցագործության փուլերի հասկացությունը:
14. Հանցագործության նախապատրաստություն, օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշները:
15. Հանցափորձ հասկացությունը, օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշները:

16. Հանցակցության հասկացությունը և տեսակները:

17. Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները:

14.4. Գնահատման չափանիշները[16].

- Սեմինար պարապմունքները՝ 4 ստուգում:
- Ինքնուրույն աշխատանքը 2:

[16] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ **042101.00.6, Իրավագիտություն**

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **042101.01.6, Իրավագիտություն**

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ **իրավագիտության բակալավր**

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ԷԻԿ/բ 122 Քրեական իրավունք 1</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">5 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">2-րդ տարի,1-ին կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">70</td><td>Դասախոսություն</td><td>36</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td>34</td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">80</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">150</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Քննություն, ընթացիկ քննություն</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Քրեաիրավական հարաբերությունների զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
Համապատասխան չափանիշների հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ: Իրավունքի տարբեր ճյուղերի և դրանցով կարգավորվող հարաբերությունների համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից: Իրավունքի այս ճյուղով կարգավորվող հարաբերությունները վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Գիտելիք

Ուսանողը դասընթացի ավարտին տիրապետում է քրեական իրավունքի վերաբերյալ համակողմանի գիտելիքների, որոնք նրան անհրաժեշտ են մասնագիտական գործունեության, ինչպես նաև հետագա կրթական մակարդակներ ընդունվելու և սովորելու համար

Հմտություն

Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար:</td></tr>
</table>

	Կարող է ինքնուրույն կազմել և մշակել իրավական փաստաթղթեր, տալ իրավաբանական եզրակացություններ, առավել արդյունավետ կազմակերպել մասնագիտական գործունեությունը: Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել իրավական նորմերը : Կարող է վերհանել օրենսդրական բացերը և խնդիրները, առաջադրել նոր լուծումներ: *Կարողունակություն* 1) Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն: 2) Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրելու օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, մասնագիտական գրականությունը : 3) Ունակ է՝ ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում կատարելու առաջադրանքներ, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս: 4) Ունակ է՝ աշխատելու թիմում: 5) Ունակ է՝ անձնական օրինակով նպաստելու իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: 6) Պաշտպանելու մարդու իրավունքներն ու ազատությունները համապատասխան իրավիճակներում:
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1, Քրեական իրավունքի հասկացությունը, համակարգը և խնդիրները: Թեմա 2 Քրեական իրավունքի սկզբունքները: Թեմա 3 Քրեական օրենք Թեմա 4 Հանցանք հասկացությունը, դասակարգումը: Թեմա 5 Հանցակազմի հասկացությունը, նշանակությունը, տարրերը Թեմա 6 Հանցագործության օբյեկտի հասկացությունը և տեսակները:Հանցագործության առարկան: Թեմա 7 Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունն ու նշանակությունը: Թեմա 8 Հանցագործության սուբյեկտը: Թեմա 9 Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը: Մեղք: Թեմա 10 Քրեական պատասխանատվության հիմքը: Թեմա 11 Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները: Թեմա 12 Հանցակցության հասկացությունը և հատկանիշները:
Գնահատման	Գնահատումն իրականացվում է «ՎՊՀ ուսանողների գիտելիքների

մեթոդները և չափանիշները	ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ»-ին համապատասխան: https://new.vsu.am/karg/2023/usanoxneri%20giteliqneri%20stugman.pdf
Գրականություն	Պարտադիր- 1.ՀՀ Քրեական օրենսգիրք 2022թ 2. «ՀՀ Քրեական իրավունք», Ընդհանուր մաս խմբ կոլ. ԵՊՀ 2014թ 3.Միքայել Գրիգորյան «ՀՀ Քրեական իրավունք» 2008թ 4. Գ. Ղազինյան «ՀՀ Քրեական իրավունք» ԵՊՀ 2010թ 5. Գ.Թ Գրիգորյան «ՀՀ Քրեական իրավունք» Ընդհանուր մաս 2022թ 6. Գաբուզյան,Մարգարյան, Սիմոնյան «ՀՀ քրեական նոր օրենսգրքի ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց» 2022թ Լրացուցիչ - 1. Մ.Գրիգորյան«Հանցագործության ուսմունքը քրեական իրավունքում» 2001թ 2. Կ.Լալայան «ՀՀ քրեական իրավունք» բուհական դասագիրք 2005թ 3. Уголовное право, обшая часть. 2018 4. Н. Ветров, Уголовное право, Обшая часть. 2015